Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Մեծամորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նախակրթարանի դաստիարակի թափուր տեղի համար (1 դրույք)

Կից ներկայացնում ենք նախակրթարանի դաստիարակի (1դրույք) թափուր տեղի համար տրված հայտարարությունը:

Մրցույթի մասնակիցների գիտելիքներն և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1).

2)կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).

3)անձը հաստատող փաստաթուղթ.

4)աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).

5)ինքնակենսագրություն (Ձև 4).

6)մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

7)այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

8)Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

9)հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ , մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք :

Փաստաթղթերն ընդունվում են հունվարի 15-ից մինչև փետրվարի 12-ը ներառյալ, ամեն օր ժամը 10.00-ից մինչև 15.00-ը, բացի շաբաթ և կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից :

Մրցույթը տեղի կունենա ***2026թ. փետրվարի 17-ին՝ ժամը 14:00-ին***, Մեծամորի թիվ 1 հիմնական դպրոցում, հասցե՝ ք.Մեծամոր, 1-ին թաղամաս, 32-1/1: Տեղեկությունների համար զանգահարել (0237) 3-35-71 կամ 093522166 հեռախոսահամարով: